



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

15.11.21 № 2/2/19/24628-21
Ձեռք N _____

MTQ 60-02, 16-11-2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ,
ՏԻՄ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՇԵՍԱԿՑԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ
profrosgu@gmail.com

Հարգելի տիկին Ասատրյան

Ի պատասխան Ձեր 2021 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 92-01 հարցմանը՝
հայտնում ենք հետևյալը.

1. Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների խրախուսման և բնակչության շրջանում պատվաստումների պահանջարկի բարձրացման նպատակով իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ բնակչության տարբեր խմբերի, այդ թվում՝ 65տ. և բարձր տարիքի անձանց համար մշակվել, տպագրվել և բաշխվել են տեղեկատվական նյութեր (բուկլետներ, պաստառներ, հրապարակման նյութեր), պարբերաբար բջջային կապի օպերատորների միջոցով տարածվել են հեռախոսային հաղորդագրություններ, հեռուստա և ռադիոհաղորդումներ և այլն:

2. Օնլայն «պլատֆորմային» տաքսի ծառայությունների՝ այդ թվում նաև gg., Yandex և նմանատիպ այլ տաքսի ծառայությունների աշխատողների՝ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացի բարելավման նպատակով իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամաններում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, այսպես՝



որպես աշխատանքի կազմակերպման պահանջ սահմանվել է աշխատողների կողմից իրենց գործատուներին յուրաքանչյուր 14 օրը մեկ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատի ներկայացումը, բացառությամբ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ ամբողջական պատվաստված, մեկ դեղաչափ պատվաստված, փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների, հղիների, մինչև 18 տարեկան աշխատողների, ինչպես նաև նախկինում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) հիվանդացած աշխատողների՝ ՊՇՌ հետազոտության առաջին դրական արդյունքից հաշված 90 օրվա ընթացքում: Պատվաստված անձանց բացառությունների ցանկում ներառելը պատվաստումների խրախուսման և բնակչության շրջանում պատվաստումների պահանջարկի ձևավորմանը նպաստող միջոցառումներից է:

Մինչույն ժամանակ տեղեկացնում ենք, որ Առողջապահության նախարարության և Yandex. Go ծառայության միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որի նպատակն է՝ բարձրացնել COVID-19 տարածման դեմ իմունականխարգելման գործընթացի արդյունավետությունը նաև ծառայությունների տրամադրման ոլորտում՝ բարձրացնելով հանրային իրազեկության մակարդակը վարորդների շրջանում և հանրային իմունիտետի ձևավորմանը նպաստելու գործում՝ <https://nih.am/am/news/79>:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՏԵՂԱԿԱԼ՝



ՎԱԿԵ ՀԱԿՈՐՅԱՆ

Կատարող՝ Դիանա Անդրեասյան

<< ԱՆ ԱՄԻ ԱՏՎԱԿ

Հեռ. (010) 23 05 62